Կ Ա Ր Ծ Ի Ք

ՀՈՎՀԱՆՆԵՍ ՍԻՄՈՆԻ ԱՍԱՏՐՅԱՆԻ <<ԽԱՂՈՂԱԳԻՆԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԱՄԱԼԻՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐԸ ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՈՒՄ>> ԹԵՄԱՅՈՎ ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ, ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ Ը.00.02 <<ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ, ՆՐԱ ՈԼՈՐՏՆԵՐԻ ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ>> ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՄԲ ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԹԵԿՆԱԾՈՒ ԳԻՏԱԿԱՆ ԱՍՏԻՃԱՆԻ ՀԱՅՑՄԱՆ ՀԱՄԱՐ

Հայաստանի Հանրապետության տնտեսության առանցքային ոլորտներից է հանդիսանում խաղողի և գինու արտադրությունը, որն ունի ոչ միայն կարևոր տնտեսական նշանակություն, այլև երկրի յուրահատուկ այցեքարտն է հանդիսանում: Պատահական չէ այն իրողությունը, որ արտաքին շուկաներում և արտահանման կառուցվածքում գինու և կոնյակի արտադրանքը զբաղեցնում է նշանակալի տեղ: Ակնհայտ է, որ հանրապետությունում խաղողագործության զարգացումը ստեղծում է գինու և կոնյակի արտադրության համար անհրաժեշտ նախադրյալներ, ինչպես նաև ապահովում է զբաղվածության որոշակի մակարդակ հատկապես գյուղական բնակավայրերում, որտեղ գործազրկության մակարդակը բարձր է, իսկ սոցիալական խնդիրները՝ առավել ցայտուն արտահայտված: Հետևաբար, որոտի զարգացումը հանրապետության համար ունի ոչ միայն տնտեսական, այլ նաև սոցիալական կարևոր նշանակություն: Ունենալով զարգացման համար անհրաժեշտ բարենպաստ պայմաններ, խաղողագինեգործության ոլորտը միաժամանակ բախվում է մի շարք հիմնախնդիրների հետ, որոնք սահմանափակում, ինչ-որ տեղ նաև խոչընդոտում են վերջինիս զարգացմանը: Անշուշտ, դրանց լուծման գործում կարևոր մասնակցություն կարող է ունենալ պետությունը՝ այդ ուղղությամբ կիրառելով կարգավորման համապատասխան լծակներ ու գործիքներ: Միևնույն ժամանակ, խաղողագինեգործական համալիրի զարգացման հիմնախնդիրների բացահայտման և լուծման արդյունավետ ուղիների մշակման առումով պետք է խիստ կարևորել գիտական ուսումնասիրությունների իրականացումը, ինչին էլ

նվիրված է սույն ատենախոսությունը: Այս հանգամանքը, ակնհայտորեն, խոսում է ընտրված թեմայի ***արդիականության և հրատապության*** մասին:

Աշխատանքն ունի տրամաբանական կառուցվածք, որում իրականացված ուսումնասիրությունները հեղինակին թույլ են տվել հիմնավորել թեմայի կարևորությունը, բացահայտել տվյալ ոլորտի առանձնահատկությունները և մշակել դրանցով պայմանավորված տնտեսական քաղաքականության հիմնական ուղղությունները:

Ներածությունում հիմնավորված են հետազոտության արդիականությունը և ստացված արդյունքների գործնական ներդրման հրատապությունը, դրված է հետազոտության նպատակը և բացահայտված են դրան հասնելու հիմնական ուղիները:

Ատենախոսության ***առաջին՝ <<Հ խաղողագինեգործական համալիրի վիճակը, տնտեսական նշանակությունը ազգային տնտեսության համակարգում և զարգացման նախադրյալները>>*** գլխում ուսումնասիրվել է խաղողագործության, գինեգործության և կոնյակագործության ճյուղերում առկա վիճակը, գնահատվել են զարգացման հնարավորություններն ու միտումները:

Հետազոտության ***երկրորդ՝ <<Խաղողագինեգործական համալիրի ուսումնասիրության մեթոդաբանական մոտեցումները, ոլորտում պետական քաղաքականության վերլուծությունը և զարգացման հնարավորությունների գնահատումը Արմավիրի մարզում>>*** գլխում ուսումնասիրվել է ոլորտի գործունեությունը կարգավորող օրենսդրահիրավական դաշտը, վերլուծության է ենթարկվել Արմավիրի մարզում խաղողագործության ճյուղի վիճակը և ներկայացվել են առկա հիմնախնդիրները:

Աշխատանքի ***երրորդ՝ <<Խաղողագինեգործական համալիրի զարգացման հիմնախնդիրները և դրանց լուծման ուղիները Հ Արմավիրի մարզում>>*** գլխում կատարվել է համալիրի քանակական գնահատում՝ տնտեսամաթեմատիկական մոդելավորման և էկոնոմետրիկ մեթոդների կիրառմամբ և ստացված արդյունքների համադրմամբ մշակվել են համալիրում առկա հիմնախնդիրների լուծմանն ուղղված առաջարկություններ:

Հետազոտության արդյունքների ***հավաստիությունը*** պայմանավորված է այն հանգամանքով, որ աշխատանքում մշակված մոտեցումները և արված առաջարկությունները հիմնված են քննարկվող հիմնահարցը ուսումնասիրող հայտնի մասնագետների աշխատությունների վրա, իսկ որպես տեղեկատվական հիմք ծառայել են այդ բնագավառին վերաբերող պաշտոնական և վիճակագրական նյութերն ու տվյալները: Ատենախոսությունում օգտագործված են վերլուծության ժամանակակից մեթոդներ, որոնք, ակնհայտորեն, բարձրացրել են ստացված արդյունքների հավաստիության աստիճանը:

Աշխատության ***գիտական նորույթը*** կայանում է նրանում, որ գնահատվել է << Արմավիրի մարզի խաղողագործական տնտեսությունների գործունեության արդյունավետությունը և առաջադրվել են տնտեսությունների վարման առաջադեմ տարբերակներ, բացահայտվել են մարզի խաղողագինեգործական համալիրի գործունեության հիմնախնդիրները և գնահատվել են զարգացման հնարավորությունները, մշակվել են ոլորտի զարգացման հիմնական ուղղությունները:

Հեղինակի կողմից մշակված մեթոդաբանական ու մեթոդական մոտեցումներն, արված առաջարկություններն ու ընդհանրացումներն ունեն ***տեսական և գործնական*** նշանակություն: Դրանք կարող են լայնորեն օգտագործվել տնտեսական կառավարման տարբեր մակարդակներում, դառնալ ինչպես ամբողջ տնտեսության, այնպես էլ նրա առանձին ոլորտների հետագա զարգացումը պայմանավորող խթանիչ տեղաշարժերի բացահայտման, դրանց ճիշտ նպատակաուղղման և տնտեսական կայուն աճի համար անհրաժեշտ նախադրյալների ստեղծման արդյունավետ գործիք: Հետազոտության արդյունքների գիտագործնական կիրառության շրջանակները բավականին լայն են և ուշադրության արժանի:

Ատենախոսությունը զերծ չէ ***դիտողություններից***, որոնցից հատկանշական են հետևյալները.

1. Կոնյակագործության ոլորտում մրցակցային վիճակի բարելավման նպատակով հեղինակն առաջարկում է փոփոխություն կատարել <<Պետական

տուրքի մասին>> օրենքում՝ նվազեցնելով կոնյակի արտադրության և իրացման համար սահմանված պետական տուրքի չափը: Նշված քայլը, հեղինակի կարծիքով, բարենպաստ պայմաններ կստեղծի նորաստեղծ ընկերությունների համար կոնյակի արտադրության և իրացման ոլորտ մուտք գործելու համար: Կարծում ենք, ներկայումս գործող պետական տուրքի բարձր դրույքաչափը, ինչ-որ առումով, նպատակ ունի ապահովել ֆինանսական կայուն հնարավորություններ ունեցող տնտեսավարող սուբյեկտների գործունեությունը տվյալ ոլորտում: Մասնակիորեն համաձայն լինելով հեղինակի կարծիքի հետ, ցանկալի կլիներ, որ ներկայացվեր նաև առաջարկվող մոտեցման հնարավոր վտանգները, ինչպես նաև հիմնավորվեր պետական տուրքի այն չափը, որն, ըստ հեղինակի, կապահովեր բարենպաստ մրցակցային միջավայր կոնյակի արտադրության և իրացման ոլորտում:

2. Խաղողագինեգործական համալիրի տնտեսավարող սուբյեկտների գործունեության վրա արտաքին տնտեսական շոկերի բացասական ազդեցությունը նվազեցնելու և արտահանողների հնարավոր ֆինանսական դժվարությունները մեղմելու համար աշխատանքում առաջարկվում է ներդնել պարտադիր ապահովագրության համակարգ, ինչպես նաև տրամադրել վարկային արձակուրդներ: Չնայած կատարված առաջարկությունների գրավչությանը, այդուհանդերձ, հանգամանալից կերպով ներկայացված չեն դրանց ներդրման և գործնական կիրառման մեխանիզմները՝ հատկապես դրանց ծախսատարության և ֆինանսական սահմանափակ հնարավորությունների տեսանկյունից:

3. Ատենախոսությունում իրականացված հետազոտությունների արդյունքում հեղինակի կողմից որպես ոլորտի զարգացմանը խոչընդոտող գործոն է դիտարկվում կոնյակագործության ճյուղում գերշխող դիրք ունեցող տնտեսավարող սուբյեկտների առկայությունը և, որպես դրա հետևանք, ոչ բարենպաստ մրցակցային միջավայրը: Ըստ էության, նշված խնդիրները գտնվում են տնտեսական մրցակցության պաշտպանության տիրույթում և, ըստ էության, պետք է լուծվեն կամ կարգավորվեն գործող օրենսդրահիրավական գործիքներով: Այլ խնդիր է, որ դրանք բավարար չեն կոնյակագործության ոլորտում առկա

խնդիրների լուծման համար՝ պայմանավորված տվյալ ճյուղի մրցակցային միջավայրի առանձնահատկություններով: Կարծում ենք, հեղինակն իր առաջարկությունները պետք է կատարեր այս համատեքստում:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Արված դիտողությունները չեն նսեմացնում հետազոտության արդյունքները: Դրանք հետապնդում են խաղողագինեգործական համալիրի գործունեությանը նվիրված հետագա ուսումնասիրությունների ուղղությունների բացահայտման նպատակ:

Հ. Ասատրյանի թեկնածուական ատենախոսությունն իրենից ներկայացնում է ինքնուրույն, ամբողջական և արժեքավոր հետազոտություն, որում դրված և լուծված են հանրապետության համար կարևոր ու արդիական խնդիրներ:

Հեղինակի մասնագիտական ու վերլուծական մակարդակն, ակնհայտորեն, բարձր է, ինչի մասին են վկայում ինչպես ատենախոսությունը, այնպես էլ դրանում ստացված արդյունքները: Աշխատանքում մշակված առաջարկությունները և կատարված եզրահանգումները կարող են լայնորեն օգտագործվել գյուղատնտեսության զարգացման ծրագրերի իրականացման ընթացքում:

Հետազոտության հիմնական արդյունքները հրապարակված են: Ատենախոսության սեղմագիրը համապատասխանում է ուսումնասիրության բովանդակությանը և արտացոլում աշխատանքի կարևորագույն դրույթներն ու արդյունքները:

Ընդհանուր առմամբ, Հ. Ասատրյանի <<Խաղողագինեգործական համալիրի զարգացման հիմնահարցերը ՀՀ Արմավիրի մարզում>> թեմայով ատենախոսությունը համապատասխանում է <<Հայաստանի Հանրապետության գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի>> 6-րդ և 7-րդ կետերի, ինչպես նաև թեկնածուական ատենախոսություններին ներկայացվող պահանջներին, իսկ դրա հեղինակն արժանի է Ը.00.02 <<Տնտեսության, նրա ոլորտների

տնտեսագիտություն և կառավարում>> մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը:

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԸՆԴԴԻՄԱԽՈՍ«
տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր
01.12.2023թ.

Վ. ԲՈՍՏԱՆՋՅԱՆ

Պարոն Վ. ԲՈՍՏԱՆՋՅԱՆԻ
ստորագրությունը հաստատում եմ՝
Բ. գ. թ.
ԵՊՀ գիտական քարտուղար

Մ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

01.12.2023թ.